Doi: 10.56737/2953-7843-2025.10-98

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ ԳԻ

ՀԱՄԱՍՏԵՂԸ ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ[1]

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաստեղի (Համբարձում Կելենյան, 1895–1966) մտերիմներից Ռուբեն Դարբինյանը (Արտաշես Զիլինգարյան, 1883–1968) իսկապես հեղինակություն էր և՛ որպես կուսակցական ընկեր,– որպես վաստակավոր մարդ, և՛ որպես խմբագիր, և՛ որպես բացառիկ գեղարվեստական ճաշակ ունեցող քննադատ։

Հիշենք, որ Համաստեղի «Երնէկ այն օրերուն» գողտրիկ պատմվածքը նվիրված է Ռ. Դարբինյանին։

Ստեփան Տարտունին պատմում է. «Ընկեր Դարբինեանի հետ ծանօթանալ եւ չկապուիլ հետը անկարելի էր։ Բարձր իմացականութեան տէր մէկն էր, լայն սիրտ, հասկցող եւ մանաւանդ ճշգրիտ գնահատումը ունէր իր շրջապատին։ Իմ բնակավայրս շատ մօտ էր իր բնակած տունին, դրացիներ էինք այսպէս ասած։ Յաճախ կը հանդիպէինք, եւ ինծի համար ամենէն հաճելի հանդիպումն էր։ Հոն կու գային նաեւ Աստուրը[2], Համաստեղը, Եղիա Գասպարեանը[3], Սեդրակ Բախտիկեանը[4] եւ բազմաթիւ ուրիշ ընկերներ»[5]։

ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Համաստեղի ծննդյան 70 եւ գրական գործունեության 50-ամյա հոբելյանի առթիվ գրած հոդվածում Ռ. Դարբինյանը պատմում է. «Ասկէ 44 տարի առաջ էր։ Նոր էի սկսած խմբագրել «Հայրենիք» ամսագիրը, երբ օր մը, ցերեկուայ ճաշէս վերադարձիս, գրասեղանիս վրայ գտայ անվարժ

---

[1]* *Ստացվել է՝ 7.07.2025, գրախոսվել է՝ 8.08.2025։ Էլ. հասցե՝* margarit2011@gmail.com:

[2] *ՀՅԴ գործուն անդամ Աստուր Խտրյան (1893–1955)։*

[3] *Գեղանկարիչ, բանաստեղծ եւ դրամատուրգ Եղիա Գասպարյան (1893–1948)։*

[4] *ՀՅԴ Ամերիկայի կենտրոնական կոմիտեի քարտուղար Սեդրակ Բախիկյան։*

[5] *Ստեփան Տարտունի [Տեր Մաթեւոսյան (1899–1988)], «Հ.Յ.Դ. Յիշատակարան Հիւսիսային Ամերիկայի 1899–1984», Բոստոն, 1988, էջ 284։*

ու անհրապոյր ձեռագրով[6] գրուած փոքրիկ պատմուածք մը՝ «Կար ամուն» վերնագրով[7]։

Դժկամութեամբ ձեռքս առի՝ հրատարակուելու արժանի որեւէ բան չսպասելով այդպիսի ձեռագրէ մը։ Ու չափազանց մեծ եղաւ զարմանքս, երբ առաջին տողերն իսկ ստիպեցին զիս յարաճուն հաճոյքով եւ յուզումով կարդալ այդ անծանօթ հեղինակին գրութիւնը մինչեւ վերջին տողը։

Պարզ էր արդէն ինձ համար, որ գործ ունէի բնածին արտակարգ տաղանդի մը հետ։ Բնականաբար ուզեցի անպայման անձամբ ծանօթանալ անոր հետ, եթէ, հարկաւ, կը գտնուէր Ամերիկայի մէջ[8]։

...Երբ կ՚անդրադառնամ իմ 44 տարիներու կեանքին Ամերիկայի մէջ եւ ամերիկահայ գաղութներու մէջ իմ ունեցած բազմաթիւ ծանօթութիւններուն՝ Ատլանտեանի ափերէն սկսած մինչեւ Խաղաղականի ափերը, կարող եմ համարձակօրէն ըսել, թէ իմ ամենէն թանկագին յիշողութիւններէն մէկը եղած է իմ ծանօթութիւնը Համաստեղի անձին հետ»[9]։

Համաստեղի եւ Ռ. Դարբինյանի ծանոթության մասին հետաքրքիր տեղեկություններ կան նաեւ Հայր Մեսրոպ Ճանաշյանի (1908–1974) «Գաւառական գրականութիւն եւ Համաստեղ» հոդվածում։ Նա Համաստեղին բնորոշում է որպես գաղափարի մարդու եւ նկարչի հմտություն ունեցող գրողի. «Արտասահմանի մէջ, մանաւանդ Ամերիկայի պէս տեղ մը, ուր կեանքը անիւի մը արժէք ունի, եւ մարդիկ կը չափուին նիւթական շահերու համեմատական չափանիշերով, մեր գրագէտը ապրեցաւ գաղափարի համար, լուռ ու առանձնացած։ ...Համաստեղ գրագէտ մըն էր, որ գիտցաւ կեանք տալ ամենէն աննշան նիւթին, գտնել հոգե-

---

[6] *Համաստեղի ձեռագիրն իսկապես դժվարընթեռնելի է, որը կարդալ սովորել եմ երջանկահիշատակ ծնողներիս՝ տոհմիկ մանկավարժներ Մարդոյան Լենայի եւ Խաչատրյան Մամիկոնի օգնությամբ։ Հակոբ Խաշմանյանը (1888–1968)՝ Համաստեղի ծննդյան 70 եւ գրական գործունեության 50-ամյա հոբելյանի առիթով կազմված հոբելյանական կենտրոնական հանձնախմբի քարտուղարը, խնդրում էր գրողին ձեռագիր նյութ ուղարկել հոբելյանական հուշամատյանի համար։ Համաստեղը պատմում է, որ շատ դժվար է կատարել խնդրանքը, որովհետեւ գրելու ընթացքում մոռացել է գեղեցիկ գրելու պահանջը, եւ տողերը կամաց-կամաց շեղվել են։ Նրա ձեռագրի պատճառով Վենետիկի «Գեղունի» հանդեսի 1947 թ. հոբելյանական համարում «Պանն էր անցեր իմ պարտէզէն» մանրապատումը «Իմ պարտէզի օրագրէն» խորագրի փոխարեն հրատարակվել է «Իմ պարեկի օրագրէն» վերնագրով։*

[7] *Խոսքը «Զոհը Կար ամուն էր» պատմվածքի մասին է։*

[8] *Կելենյան ընտանիքն ապրում էր Բոստոնում։*

[9] *«Հայրենիք» օրաթերթ, 1966 թ. սեպտեմբերի 11 [տե՛ս «Համաստեղ. Մոռացված էջեր» քառահատոր գրքի (կազմող եւ ծանոթագրող՝ Մարգարիտա Մ. Խաչատրյան) հտ. Գ., էջ 273]։*

բանական ճիշտ անկիւնը ու նկարչի մը պէս քանդակել իր պատկերը, իր տիպարը»[10]։

Հոդվածն ավարտվում է այսպես. «Իր անցեալէն մանրավէպ մը յիշելու համար ըսենք հոս, որ ամսագրի խմբագրապետը՝ Ռուբէն Դարբինեան, օր մը իր գրասեղանին վրայ կը գտնէ յօդուած մը թերթին համար։ Ան պահ մը կը խորհի՝ ձեռագիրը ձեռքը բռնած, թէ այդ յօդուածն ալ չէ՞ր այն տեսակներէն, որ խմբագրապետներուն համար աւելի սրտի նեղութիւն կը պատճառեն, քան հրճուանք։ Սակայն, հազիւ կարդացած զայն, կը փնտռէ իսկոյն հեղինակը՝ շնորհաւորելու համար զայն։ «Կար ամու»-ի[11] պատմուածքն էր՝ հրապուրիչ իր թարմ ու ինքնատիպ ոճովը նորութիւն մը հայ գրականութեան համար։ Սակայն Համաստեղ չէր երեւեր. արդեօք կը վախնա՞ր դիտողութիւններ լսելէ, թէ՞ իր բնածին համեստութեամբը չէր համարձակեր ցուցնել ինքզինքը։ Ռ. Դարբինեան, տեսնելով, որ Համաստեղ չի ներկայանար ինքնաբերաբար իր պաշտօնարանը, հրահանգ կու տայ, որ բռնի կերպով զայն իրեն բերեն անպատճառ։ Ու այդպէս ալ կ՚ըլլայ։ Այնուհետեւ սրտակից բարեկամութիւն կը հաստատուի գրագէտին եւ խմբագրապետին միջեւ։ Այս երկչոտ յայտնութենէն ետքը ան այլեւս փնտռուած դրագէտը եղաւ, որ առանց աղմուկ հանելու իր շուրջը, ամբողջ յիսնամեակ մը արտադրեց՝ հարստացնելով մեր արդի հայ գրականութիւնը՝ շարունակելով Թլկատինցիի, Զարդարեանի գիծը, բայց տալով անոր բնորոշ ու անձնական այնպիսի ոճ մը, որ իր բացառիկ գեղեցկութեամբը պարտադրեց իր անունին հանդէպ յարգանք ու գնահատանք։ Իր ստեղծած արուեստն ու գրականութիւնը պիտի ապրի երկար ատեն, որպէս բնաշխարհիկ ծաղիկ մը հայրենի գիւղերուն՝ միշտ դալար ու կենդանի»[12]։

ԳՐԱԿԱՆ ՀԱՐՈՒՍՏ ՀՈՒՆՁՔԸ

Այս ՀԱՅ մարդկանց մտերմության եւ ստեղծագործական համագործակցության վկայությունները պահպանվել են մամուլի էջերում, հատկապես՝ «Հայրենիք» օրաթերթում ու համանուն ամսագրում։ Երկար տարիներ Բոստոնում հրատարակվող այս օրաթերթը[13] եւ 1922-ից նույն քաղաքում

---

[10] «Հայ ընտանիք» ամսօրյա պարբերաթերթ, Վենետիկ, 1969, հունվար, էջ 5։
[11] Տես 6-րդ ծանոթագրությունը։
[12] «Հայ ընտանիք» ամսօրյա պարբերաթերթ, Վենետիկ, 1969, հունվար, էջ 5։
[13] Լույս է տեսնում 1899 թ. մայիսի 1-ից, սկզբում՝ Նյու Յորքում, 1900 թ.՝ Բոստոնում։

հրատարակվող նույնանուն ամսագիրը բացառիկ դեր ունեին Համաստեղի ստեղծագործական կյանքում. նրա առաջին գրական փորձերը՝ բանաստեղծություններն ու մանրապատումները, հրատարակվել են այս օրաթերթում, իսկ ամսագրում տպագրվել են նրա գրեթե բոլոր արձակ էջերը։ Համաստեղը հոդվածներում եւ նամակներում «Հայրենիք» հանդեսը հիշատակում է գլխագիր Ամսագիր *բառով։*

«Մեր ծանօթութեան երկար տարիներու ընթացքին գրեթէ օր չէր անցնէր, որ Համաստեղ չգար խմբագրատուն՝ ինձ մօտ եւ, որքան ալ զբաղուած ըլլայի, մտերմական խօսակցութիւն չունենար ինձ հետ՝ հանրային, գրական, երբեմն ալ անձնական խնդիրներու մասին։ Եւ ատիկա հոգեկան պահանջ մը դարձած էր թէ՛ իրեն եւ թէ՛ ինձ համար։ Իսկ երբ այս կամ այն պատճառով հնարաւոր չէր ըլլար մեր հանդիպումը խմբագրատան մէջ, մենք անպայման իրարու հետ կը հանդիպէինք ճաշարանի մը մէջ՝ ցերեկուայ մեր ճաշերու ժամին»[14],– պատմում է Ռ. Դարբինյանը։ Նա առաջիններից մեկը գրախոսեց «Գիւղը» ժողովածուն[15], իսկ ավելի ուշ՝ 1966-ին Համաստեղի ծննդյան 70 եւ գրական գործունեության 50-ամյակների առիթով կազմված հանձնախմբի պատվական նախագահն էր։

Համաստեղը պնդում էր՝ սփյուռքահայությունն ստեղծել է մշակութային երկու բացառիկ իրողություն՝ «Հայրենիք» ամսագիրն ու Բեյրութի Հայ ճեմարանը, սրանցով պետք է հպարտանալ եւ առաջին իսկ հնարավորության դեպքում տանել հայության Հայրենիք։ Գրողն ամեն օր լինում էր «Հայրենիք»-ների խմբագրատանը, որը համարում էր հեռավոր Հայրենիքի փոքրիկ հիշատակ։ «Հայրենիք» ամսագրի առաջին համարում տպագրված է Համաստեղի նշանավոր «Ջալոն»։ Ի դեպ, այս պատմվածքը տպագրվել է «Սովետական Հայաստան» ամսագրի 1966-ի 6-րդ համարում՝ դառնալով հայրենաբնակ հայությանը Համաստեղի գրականությունը ներկայացնելու առաջին ու վերջին ծիծեռնակը։

«Համաստեղ. Մատենագիտական ցանկեր» գրքույկում[16] գրողի՝ «Հայրենիք» ամսագրում տպագրված երկերի թիվը 40-ից ավելի է։

---

[14] *«Հայրենիք» օրաթերթ, 1966 թ. նոյեմբերի 11 (տե՛ս «Համաստեղ. Մոռացված էջեր», Գ. հատոր, էջ 273)։*

[15] *«Հայրենիք», 1924 թ., համար 5 (տե՛ս «Համաստեղ. Մոռացված էջեր» գրքի Բ. հատոր, էջ 200–218)։*

[16] *«Համաստեղ. Մատենագիտական ցանկեր» (կազմող՝ Մ. Խաչատրյան), Երեւան, 2004, 26 էջ։*

Լույս են տեսել «Հայրենիք» ամսագրի 526 գրքեր։

Պահպանվել են Համաստեղի նամակները Ռ. Դարբինյանին[17]*։*

«Հայրենիք» ամսագրի 1964 թ. 4-րդ համարում «Համաստեղի նամակները» խորագրով հրատարակված են գրողի հինգ նամակները Ռ. Դարբինյանին։

Ամսագրում լույս են տեսել Համաստեղի՝

ա) հինգ բանաստեղծություններ [«Մայր իմ անուշ» (1941, № 6), «Եթէ» (1944, № 3) «Հին հեքեաթ» (1945, № 5), «Աստուածամօր արցունքները» (1948, № 4), «Երբ իրիկունն էր մեր գիւղին» (1948, № 8)],

բ) տասնչորս պատմվածքներ՝ [«Զալօն» (1922, № 1), «Վարդան» (1922, № 2, 1923, № 3–4), «Միջօն» (1923, № 6), «Երնէկ այն օրերուն» (1923, № 7), «Փիլիկ աղբար» (1923, № 9), «Թափառաշրջիկի մը օրագրէն» (1924, № 1), «Աղջի Եղսիկ» (1924, № 6), «Անձրեւը» (1924, № 9), «Համբոյրը» (1925, № 5), «Զամչով կարկանդակ» (1926, № 6), «Մակարի տղան Մարգարը» (1927, № 1), «Զրոյց շունի մը հետ» (1927, № 6), «Հայրս» (1939, № 2), «Սպասում» (1939, № 11), «Հրեայ բարեկամս» (1940, № 5), «Քաջն Նազար» (1940, № 9), «Յուցատախտակը» (1941, № 6), «Երանոս աղբարը» (1946, № 3), «Լուքաս աղբարը եւ աղավնին» (1948, № 4)],

գ) եռամաս վիպակ [«Սպիտակ լեռներու մէջ» (1925, № 2), «Վերադարձ» (1926, № 1), «Նիւ Եորքի մէջ» (1926, № 8)]։

դ) «Սպիտակ Ջիաւորը» վեպը [1931–1933 թթ. համարներ, 1950, № 4)]։

ե) «Աղօթարան» քնարական [1956, 1–3 եւ 5 համարներ) եւ «Սրբազան կատակերգութիւն կամ Տոմար մաքիական» երգիծական (1938, № 4–9) պոեմներ։

Հիշեցնեմ՝ Համաստեղի այս երգիծական պոեմը 1960 թ. Բեյրութում հրատարակված «Այծետոմար եւ ուրիշ բանաստեղծութիւններ» գրքում լույս է տեսել է «Այծետոմար» խորագրով։

զ) դրամատիկական պատկերներ [«Քրիստոսի երկրորդ գալուստը» (1942, № 3–6)], «Հայաստանի լեռներու սրնգահարը» (1944, № 6), «Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ (Մեսրոպ Մաշտոց Եդեսիա կը ճամբուի)» (1962, № 7–8)]։

է) հոդվածներ եւ գրականագիտական ուսումնասիրություններ [«Կորիւն Մկրտիչեան» (1929, № 4), «Շրջանը եւ Ռաֆֆին» (1939, № 3), «Նիկոլ

---

[17] *«Համաստեղ. Նամականի» (կազմող եւ ծանոթագրող՝ Մ. Խաչատրյան), Երեւան, 2003, էջ 117–129 եւ էջ 407–410։*

Աղբալեան» (1948, № 1), «Եղիա Գասպարեան» (1949,№2), «Կ. Սասունիի «Գրական գոհարներ» գրքին առիթով» (1951, № 3)]։

«Հայրենիք» ամսագրի 1969 թ. 8-րդ համարում տպագրված է Համաստեղի վերջին խոսքը՝ «Կարապի երգ» խորագրով[18]։

ՄՏԱՎՈՐԱԿԱՆԻ ՈՒ ԸՆԿԵՐՈՋ ՄԱՍԻՆ

Համաստեղը տարբեր առիթներով խոսել ու գրել է «Հայրենիք»-ների ու դրանց խմբագրի մասին։

Այսպես՝ «Հայրենիք» օրաթերթի 1927 թ. նոյեմբերի 6-ի համարում տպագրված է Համաստեղի կարծիքը «Հայրենիք» ամսագրի մասին. «Պոլսոյ Եղեռնէն յետոյ կասկած չկայ, որ վերջին վեց տարիներու ընթացքին գաղութահայ մշակույթի կեդրոնը դարձած է Ամերիկան՝ շնորհիւ երկու «Հայրենիք»ներու։

Ներկայ պայմաններուն մէջ ամսագրի մը յաջողութիւնը ինքնին մեծ յաղթանակ է, եւ այդ արդիւնք է զոհաբերութեան, մեծ հաւատքի եւ կարողութեան։

Ամսագիրը ինքնին համազգային հաստատութիւն մըն է արդէն, ուր հիներու շարքին կը տեսնուին նորեր իրենց գոյութիւնը արդարացնող հետաքրքիր պայքարին մէջ։

Ամսագիրը զուտ հայկական ընելու գաղափարը հիանալի է ու շատ ինքնատիպ։

Եթէ առիթը ըլլայ «Հայրենիք» ամսագիրը Հայրենիք տանիլ ու վաղուան սերունդին կտակել, կտակին մէջ կարեւոր է ավելցնել, թէ ամսագիրը զուտ հայկական պահելը անհրաժեշտ է»։

«Ասպարէզ» շաբաթաթերթի 1947 թ. հունվարի 31-ի համարում խմբագրությունը հայտնում է, որ Ռուբեն Դարբինյանը օրեր առաջ (հունվարի 26-ին) ժամանել է Կալիֆոռնիա եւ մնալու է երկու ամիս (իրականում՝ ավելի երկար մնաց)՝ «Հայրենիք» ամսագրի 25-ամյա հոբելյանին եւ համանուն հիմնադրամին նվիրված ձեռնարկներին մասնակցելու համար։ Ֆրեզնո, Սան Ֆրանցիսկո եւ Լոս Անջելես քաղաքներում կազմակերպված հանդիսություններին մասնակցել է նաեւ Համաստեղը։

Մինչ այդ՝ «Ասպարէզ»-ի 1947 թ. մարտի 21-ի համարում տպագրվել է

---

[18] *Տե՛ս «Համաստեղ. Մոռացված էջեր», հտ. Բ., էջ 192–199։*

Համաստեղի կարծիքը «Հայրենիք» ամսագրի մասին. «Հայ մտաւորականութիւնը այս անգամ դուրս հալածուեցաւ ու երկրին մէջ սկսաւ քանդումը անխնայ այն բոլոր արժէքներուն, որոնք նուիրական էին հայ ժողովուրդին՝ որպէս ոգի եւ որպէս ներշնչարան։ Հայ ժողովուրդին համար չկար նուիրականութիւն մը, որուն վրայ ազգային դրոշմը դրուած չըլլար։ Անոր մշակոյթը ազգային ըլլալէ տարբեր բան չէր կրնար ըլլալ, եւ այդ էր իր կարեւոր զէնքը։ Այդ ազգայինն էր, որ անխնայ կերպով կը քանդուէր եւ կը հալածուէր։ Մեր բանաստեղծները չէին կըրնար յիշել Արարատը, Հայաստանը, յիշել Րաֆֆին մեծագոյն ոճիրն էր, իսկ պատմութիւնը թանգարան կը դրուէր՝ մամութի [= *մամոնտ*] *ոսկորներուն պէս։*

Այդ շրջանին էր, որ այս անգամ Ամերիկայի մէջ հիմք կը դրուէր «Հայրենիք» ամսագրին՝ տէր դառնալու Հայաստանի մէջ հալածուող հայ ժողովուրդի ոգեկան արժէքները։ Այս անգամ Ռուբէն Դարբինեան մը կը կանչուի կառուցանելու մշակութային այն ամրոցը, որ էն կարեւոր զէնքը եղած է հայ ժողովուրդի գոյութեան պայքարին։ Դարբինեան կանչուեցաւ այնպէս, ինչպէս իրենց շրջանին կանչուեցան Րաֆֆիներն ու Աբովեանները՝ իրենց կարեւոր դերերը կատարելու։ Ռուբէն Դարբինեան իր ազգային ու լրագրական երկար տարիներու աշխատանքին մէջ եղած է յանդուգն պաշտպանողը ազատական ու տէմօկրատ սկզբունքներուն, ինչ որ հայ ժողովուրդի նկարագիրը եղած է Հայկէն մինչեւ Հայաստանի Հանրապետութիւնը։ Կը հաւատանք, որ այդ ճիգը կայ նաեւ այսօր Հայաստանի եւ հայ ժողովուրդին մէջ»։

Նույն շաբաթաթերթի 1947 թ. ապրիլի 4-ի համարի «Համաստեղ մեր մէջ» կարճ հաղորդագրությունում կարդում ենք, որ գրողը Կալիֆոռնիայում մնալու է մինչեւ ապրիլի 18-ը։ «Ասպարէզ»-ի 1947 թ. ապրիլի 4-ի եւ 25-ի համարներում տպագրված են հատվածներ Լոս Անջելեսում եւ Ֆրեզնոյում կազմակերպված հանդիսություններում Համաստեղի ելույթներից՝

ա) «Երրորդ բանախօսը՝ ընկեր Համաստեղ, որուն մենք ծանօթ ենք երկար տարիներէ վեր, եղաւ ճշմարիտ յայտնութիւն մը, գոնէ մեզի համար։ Ան մեր ճանչցած ամօթխած ու սահմանաւոր խօսող Համաստեղը չէր, այլ թէեւ հեղասահ, բայց մշտահոս գետակ մը, որ իր սրտայոյզ արտայայտութիւններով հմայեց ներկաները։ Ընկեր Համաստեղ խօսեցաւ կարճ, բայց կուռ եւ իմաստալից։

«Դարաւոր ստրուկութեան շղթաներուն մէջ տուայտող հայը ոչ միայն կրցած է պահել իր գոյութիւնը,– ըսաւ ան,– այլ[եւ] իր մէջ ամրացուցեր

ու զարգացուցեր է Հայկ Նահապետի, Արա Գեղեցիկի, Մամիկոնեան ցեղի եւ Մեսրոպ-Մաշտոցի ազատութեան համար պայքարելու, զոհուելու մշակոյթը պահպանելու արիական հիազդեցիկ ոգին»։

բ) «Երկրորդ բանախօսն էր տաղանդաւոր գրագէտ Համաստեղ, որուն «Գիւղը» եւ «Անձրեւը» գրքերը այնքան փնտռուած գրքեր են։ Ան ըսաւ. «Հայ ըլլալը շատ դժուար բան է. ան ոչ միայն արիւնի ճամբաներէն անցած է ու կ'անցնի տակաւին մեր պատմութեան ընթացքին, այլ միաժամանակ բարձր կը պահէ իր նկարագիրը։ Կը հաւատայ իր նկարագրի ազնուութեան, զերծ է ստորադասութեան զգացումէ եւ գիտէ զոհել իր ազատութեան համար։ Մեր նախնիքը մարտնչած ու զոհաբերած են յանուն մարդկային իրաւունքներու եւ ազատութեան։ Այսօր ալ մենք պարտական ենք զոհել նոյն նպատակներուն համար։ Վա՜յ այն ժողովուրդներուն, որոնք իրենց իտէալներուն համար զոհել չեն գիտցած։ Մենք քշուեցանք անապատները, չյուսահատեցանք եւ տառապանքի մէջ անգամ բարձր գնահատեցինք մեր հոգեկան ու մշակութային արժէքները։

Հինգերորդ դարուն մենք շրջապատուած էինք հզօր թշնամիներով, բայց եկաւ վարդապետ մը եւ իր մշակութային երկունքով եւ ստեղծագործութեամբ յաղթեց իր թշնամիներուն։ Ունեցանք Վարդան մը Աւարայրի դաշտին մէջ, որ խիզախեց յանուն խղճի ազատութեան։ Զուգահեռ մենք ունեցանք չարսանճաղցի Վարդան մը, որ սալավաթ *չկանչեց թշնամի սպառնալիքներուն դէմ եւ խաչակնքեց յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյն ու քաջաբար մեռաւ մեր թշնամու գնդակներէն։*

Հայաստանի Հանրապետութիւնը մեր ազնուական ժողովուրդի ոգու ստեղծագործութիւնն է։

«Հայրենիք» ամսագիրը ազատ խօսքի եւ անկաշկանդ մտածումի յուշարձանն է, որուն շուրջ հաւաքուած մտաւորականութիւնը կը ջանայ բարձր բռնել այն դրօշակը, որ մտքի ու գաղափարի ազատութիւնը կը խորհրդանշէ»։

1947 թ. օգոստոսի 28-ին Համաստեղը գրել է Վահե Հայկին (Տինճյան, 1896–1983). «Ձեր Քալիֆոռնիան շատ սիրեցի, կլիմայի շատ լաւ ատենն այդտեղ էի. գարուն էր, եւ միջոցին մէջ նարնջենիներուն բուրմունքը կար միշտ։ Այդ շրջանին հրաշալի էին ձեր Ֆրեզնոյի երկինքն ու արեւը։ Կ'ըսեն նաեւ, որ Ֆրեզնոն գեղեցիկ է, երբ խաղողները կը հասուննան, եւ ես կրնամ երեւակայել կախուած խոշոր կոյտերը խաղողներուն»[19]։

---

[19] *«Համաստեղ. Նամականի», էջ 215։*

1956 թ. հունվարի 29-ին Լոս Անջելեսում նշվել է Ռուբեն Դարբինյանի կուսակցական, հասարակական գործունեության 50-ամյա հոբելյանը։ «Հայրենիք» օրաթերթի 1956 թ. հունվարի 26-ի խմբագրականը վերնագրված է «Յարգանք վաստակաւորներուն» եւ նվիրված է Ռ. Դարբինյանին։

Այդ հոբելյանի մանրամասները Համաստեղը պատմում է 1956 թ. փետրվարին (նամակը թվագրված չէ) եւ մարտի 30-ին Ս. Վրացյանին (Գռուզյան, 1882–1969) գրած նամակներում՝

ա) «Դարբինյանին համար «յոբելեան» անունը չի կրցին տալ՝ «նախընթաց ունեցած չենք» քարացած խօսքերը մէջտեղ ձգելով...

Եթէ այդ ալ չի կարենանք ընել, ուրեմն բան մը կայ սխալ։ Եթէ գնահատել չգիտենք, ուրեմն ընդունակ չենք լաւ բաները ըմբռնելու»[20]։

բ) «Դժբախտաբար մեր կուսակցութիւնը շատ ժլատ է նման գնահատումներուն համար։ Ան կրնայ նաեւ խափանել, հակառակ անոր, որ մշակը 50 տարի իր հողին, արտին մէջ աշխատեր է։ Չգիտեմ ինչպէս կարելի է բացատրել. չենք գնահատեր, թէ՞ կայ անկեղծութեան պակաս։ Կուսակցութիւնը պէտք է գնահատել գիտնայ ձեզի, Վահանին[21] եւ Դարբինեանին նման աշխատաւորներ, որ կեանքի մը ժամանակը տուած են»[22]։

«Հայրենիք» թերթի 1959 թ. հունիսի մի քանի համարներ նվիրված են Ռ. Դարբինյանին։ Թերթի հունիսի 26–27-ի համարներում տպագրված է Համաստեղի «Ռ. Դարբինեանի 50 տարուան աշխատանքին առիթով» ծավալուն հոդվածը։ Գրողը մանրամասնորեն ներկայացնում է Ռ. Դարբինյանի՝ «հաւատքով, աշխատանքով, պայքարով եւ վտանգով լեցուն կեանք»-ի հիմնական հանգրվանները՝ հատկապես արժեւորելով նրա խմբագրական աշխատանքը։ Նա արձանագրում է. «Հայ մշակոյթը եւ ժողովուրդը նորէն վտանգի տակ էր։ Փրկելու համար մշակոյթը, նաեւ մտաւորականութիւնը, Դարբինեան ամսագիրի շուրջ հաւաքեց, պապենական օճախի մը պէս, բանասէրը, պատմագիրը, յուշագիրը, քաղաքական մարդը, վիպագիրը, բանաստեղծը, գիտնականը, եկեղեցականը, կուսակցականն ու անկուսակցականը։ Հաստատեց աշխատակիցներու լաւ վճարելու դրութիւնը։ Բան մը, որ իրմէ առաջ պատահականութեան ձգուած էր»։

«Չգիտեմ՝ հայ մտաւորականութիւնը պիտի կրնա՞ր հաւաքել ինքզինք,

---

[20] *«Համաստեղ. Նամականի», էջ 336։*

[21] *Նկատի ունի ՀՅԴ գործուն անդամ, «Յուսաբեր»-ի երկարամյա խմբագիր Վահան Նավասարդյանին (1886–1956)։*

[22] *«Համաստեղ. Նամականի», էջ 337։*

եթէ չըլլային ամսագրի առաջին 15–20 տարիները։ Ամսագիրը փրկեց, ապրեցուց շատ բան, շինեց իր շրջանը – ամսագրի շրջան – մինչեւ որ գաղութները իրենք զիրենք գտան։ Ամսագիրը իր կարեւոր դերին մէջ է նաեւ այսօր։ Դիւրին գործ չէ բազմազան աշխատակիցներու հետ գործ ունենալ։ Դարբինեան զարմանալի համբերանքով տարաւ բոլորին քմայքները, որպէսզի չտուժէ գործը։ Ահա՛ աշխատանքով, հաւատքով, առողջ մտածումներով, լաւատես կեանք մը, որ այս օրերուն կը բոլորէ 50 տարուայ աշխատանք մը։ Ան աշխատած է 50 տարիներ եւ կը շարունակէ աշխատիլ առանց հանգատի, առանց յոգնութեան։

Հաւատք դէպի նպատակը անոր մէջ կամք է եւ առողջութիւն»,– գրում է Համաստեղը։

«Հայրենիք» օրաթերթի 1968 թ. հունիսի 16-ի համարում, որ հարգանքի տուրք է Ռուբեն Դարբինյանի հիշատակին, տպագրված է Համաստեղի խոսքը. «Ինչպէս կան իրապաշտներ գրականութեան, գեղարուեստի կալուածներուն մէջ, նոյնպէս կան իրապաշտներ մեր քաղաքական-կուսակցական-ազգային աշխատանքներուն մէջ։ Դարբինեան եղաւ այն քիչերէն, որոնք զերծ մնացին ռոմանթիզմէ, ազգային-քաղաքական կեանքի մէջ։ Վտանգներու, ձախողանքներու մէջ ան ոչ միայն չընկրկեցաւ, այլեւ աւելի հիմնաւորեց նպատակը եւ աւելի հաւատաց։

...Գործիչ-խմբագիրներ շատ ունեցանք, ունեցանք տաղանդաւոր գրագէտներ, փայլուն հռետորներ, մեծ ուսուցիչներ, ծանր եկեղեցականներ։ Դարբինեան պիտի մնայ էն արժանաւորներու շարքին, եւ ինքնորոյն՝ իր յանդուգն լաւատեսութեամբ։ Այդ լաւատես գիծն է, որ ուժեղ կապի մը պէս անցած է իր 50 տարուան յոգնավաստակ աշխատանքներուն միջեւ։

Դարբինեանի առաւելութիւններէն մէկը պակաս զգացական ըլլալն է։ Ան միշտ տրամաբանելով տարաւ իր գործը՝ իր խօսքին, իր ոճին չափ իրական։ Անոր մէջ այնքան ուժեղ է տրամաբանականը, որ կարելի չէ քանդել»[23]*։*

ԳԱԹ-ում՝ ՀՖ-ի 39-րդ եւ 66-րդ համարներում, պահվում է Համաստեղի գրավոր խոսքը Ռ. Դարբինյանի մասին։ «Մենք կը մաղթենք, որ ան ըլլայ առողջ, որովհետեւ դեռ անելիքներ ունի, ու կ՚ուզենք զինք տեսնել միշտ ալ պատնէշին վրայ»,– մաղթում է Համաստեղն ընկերոջն ու անխոնջ մտավորականին։

---

[23] *Այս խոսքը, հավանաբար, հատված է Համաստեղի՝ մամուլում հրատարակված, բայց չպահպանված հոդվածից կամ ելույթից։*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մարդուն մարդու հետ միավորող բազմաթիվ տեսանելի ու անտեսանելի կապերից արժեքավոր են փոխադարձ համակրանքն ու ընդհանուր նպատակները։ Համաստեղն ու Ռուբեն Դարբինյանը, անկախ կուսակցական պատկանելությունից ու գործունեության դաշտից, առաջին հերթին հայության հոգսերին տեղյակ ՀԱՅ մարդիկ էին, որոնք պարբերաբար հայտնվում էին «ճակատի գծում»՝ միշտ փայփայելով Հայրենիք ունենալու եւ նրան անմնացորդ ծառայելու գաղափարը։

Տասնամյակների ընթացքում այս մարդկանց ընկերությունն ու համագործակցությունը տվեց շատ առատ պտուղներ՝ հարստացնելով հայ գրականությունն ու հայ մամուլի պատմությունը։ Եղան վիճելի հարցեր, քիչ չէին նաեւ դրսից միջամտությունները, բայց սերունդների հիշողության մեջ մնացին երկու պայծառ անուններ՝ որպես նվիրումի եւ ազգային շահերի պաշտպանության օրինակ մեր օրերում ու նաեւ հաջորդ սերունդների համար։

ԱՄՓՈՓՈՒՄ

Ռուբեն Դարբինյանը, որպես կուսակցական ընկեր ու վաստակավոր մարդ, որպես խմբագիր ու բացառիկ գեղարվեստական ճաշակ ունեցող քննադատ, հեղինակություն էր։ Նա խմբագրում էր «Հայրենիք» օրաթերթը եւ նույնանուն ամսագիրը, որոնք բացառիկ դեր ունեցան Համաստեղի ստեղծագործական կյանքում։

Համաստեղը համոզված էր՝ «Հայրենիք» ամսագիրը մշակութային բացառիկ երեւույթ է, որով պետք է հպարտանալ։ Գրողն ամեն օր լինում էր «Հայրենիք»-ների խմբագրատանը, որը համարում էր հեռավոր Հայրենիքի փոքրիկ հիշատակ։ Այս ՀԱՅ մարդկանց համագործակցությունը տվեց շատ առատ պտուղներ՝ հարստացնելով հայ գրականությունն ու հայ մամուլի պատմությունը։

Համաստեղի եւ Ռուբեն Դարբինյանի ընկերությունը նվիրումի եւ ազգային շահերի պաշտպանության օրինակ է մեր օրերում ու նաեւ հաջորդ սերունդների համար։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Կուսակցական ընկերներ, խմբագիր, «Հայրենիք» օրաթերթ եւ ամսագիր, Ռուբեն Դարբինյան, Համաստեղ:

РЕЗЮМЕ

Рубен Дарбинян, как партийный товарищ и заслуженный деятель, как редактор и критик с исключительным художественным вкусом, пользовался большим авторитетом.

Он редактировал ежедневную газету «Айреник» и одноимённый ежемесячный журнал, которые сыграли выдающуюся роль в творческой жизни Амастега.

Амастег был убеждён, что журнал «Айреник» – это уникальное культурное явление, которым следует гордиться. Писатель ежедневно бывал в редакции «Айреника», которую считал маленьким напоминанием далёкой Родины.

Сотрудничество этих АРМЯН принесло обильные плоды, обогатив армянскую литературу и историю армянской печати.

Дружба Амастега и Рубена Дарбиняна является примером преданности и защиты национальных интересов – как для нашего времени, так и для будущих поколений.

SUMMARY

Ruben Darbinyan enjoyed great authority as a devoted party member and distinguished figure, as an editor and critic with exceptional artistic taste.

He edited the daily newspaper Hayrenik and the monthly journal of the same name, which played a prominent role in Hamastegh's creative life.

Hamastegh was convinced that the Hayrenik monthly was a unique cultural phenomenon to be proud of. The writer visited its editorial office every day, considering it a small reminder of his distant homeland.

The collaboration between these ARMENIANS bore abundant fruit, enriching the Armenian literature and history of the Armenian publishing.

The friendship between Hamastegh and Ruben Darbinyan is an example of dedication and defense of national interests–both for our time and for future generations.